

Բանը հասել է նրան, որ տաս տարուց ավելի միլիարդատերերի ցուցակը գլխավորող Բիլ Գեյթսը դեռևս 2008թ. դեկտեմբերին հայտարարել է, որ 2009թ. բարեգործական օգնությունների ծավալը կրճատելու է 10%-ով, իսկ բարեգործական ֆոնդի ամձնակազմին կոչ է արել կրճատել սեփական պահպանության ծախսերը: Առանձին երկրներ, ինչպես, օրինակ, Իսլանդիան՝ հանձին երկրի վարչապետի, ֆինանսական ճգնաժամի մեղմացման միջոցառումների շարքին է դասում սեփական դրամական միավորից հրաժարվելու և դուլարը կամ եվրոն իրենց երկրի դրամական միավոր դարձնելու հնարավորությունը: 2008թ. դեկտեմբերին Չինաստանի նման երկրի դրամական միավորի (յուանի) կուրսը ամերիկյան դուլարի համեմատությամբ վերջին երեք տարիներին առաջին անգամ իջավ 0,73%-ով: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ Հիլարի Զվինտոնը մինչև ԱՄՆ-ի պետքարտուղարի պաշտոնը զբաղեցնելը հայտարարել էր, որ ԱՄՆ-ը չի կարող միայնակ լուծել իր պրոբլեմները և միայնակ դուրս գալ ֆինանսական ճգնաժամից: Համատարած են մավթի համաշխարհային գնի անկումները (շուրջ 40 դոլար), որն իր ազդեցությունն է ունեցել նաև մյուս ապրանքների գնանկման վրա: Ապրանքների ու մատուցվող ծառայությունների գնանկման պայմաններում կրճատվում են մավթի արդյունահանման, ապրանքների արտադրության, մատուցվող ծառայությունների և այլնի ծավալները: Այդ ամենն, իրենց հերթին հանգեցնում են աշխատատեղերի կրճատման ու գործազրկության աննախադեպ աճի՝ իր բացասական բոլոր դրսևորումներով հանդերձ:

ԴԱՎԻԹ ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.*

ԳԼՈՐԱԼԻԶԱՅԻԱՆ ԵՎ ՆՐԱ ՓՈԽԵՐԸ

Գլոբալիզացիան կարևոր տնտեսական երևույթ է, որի դերն ու նշանակությունը տարեց-տարի մեծանում է: Ներկայումս յուրաքանչյուր երկիր ձգտում է առավելագույնս համագործակցել աշխարհի զարգացող ու զարգացած երկրների հետ և արդյունքում գտնել իր տեղը համաշխարհային շուկայում՝ տրամադրելով իր ապրանքները և ծառայությունները: Այս գործընթացը հատկապես կարևորվում է զարգացող երկրների համար, (այդ թվում նաև մախկին խորհրդային (ներկայումս՝ ԱՊՀ) պետությունների համար), որոնք շուկայական համակարգին ինտեգրվել են ընդամենը մի քանի տասնամյակ առաջ, ու որոնց կայացման գործում դա կարող է վճռորոշ ազդեցություն ունենալ: Գլոբալիզացիայի դերը էլ ավելի լավ հասկանալու և գիտակցելու համար կարևոր է հասկանալ դրա տնտեսական, սոցիալական, ինչպես նաև քաղաքական նշանակությունը:

Հարկ է նշել, որ գլոբալիզացիա տերմինն ունի բազմակի նշանակություն և կիրառվում է տարբեր ենթատեքստերով: Մակայն այս դեպքում մենք գլոբալիզացիա տերմինը կընդունենք որպես տնտեսական գլոբալիզացիա, որի մեջ մտնում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի շարժը մի պետությունից դեպի մյուսը: Արդյունքում տեղի են ունենում շուկաների փոխադարձ համագործակցություն և երբեմն էլ նույնիսկ միավորում:

Գլոբալիզացիան անցել է պատմական մի քանի փուլեր.

Առաջին փուլը ներառել է 1870-1914 թվականները, երբ միջազգային առևտուրը տարեկան աճեց 4%-ով, իսկ կապիտալի միջազգային շարժը՝ 4.8%-ով: Գլոբալիզացիայի առաջին փուլին հաջորդեց անսպասելի հաջողությունը: Արդյունքում տնտեսական աճը բարելավվեց, և 1870-1914թթ. համաշխարհային ՀՆԱ-ի աճը մեկ անձի հաշվով կազմեց 1,3%, այնինչ 1820-1870 թթ. այդ նույն ցուցանիշը 0,53% էր: Հասկանալի է, որ գլոբալիզացիայի արդյունքներից օգտվեցին

զարգացած երկրները, որոնք միջազգային առևտրի արդյունքում մեծ օգուտներ ստացան: Այնինչ կարևոր է պարզել, թե արդյոք այս գործընթացը օգտակար էր զարգացող կամ աղքատ երկրների համար: Այս առումով պետք է փաստել, որ գլոբալիզացիան օգտակար էր երկու կողմերի համար էլ և այս առումով նույնիսկ փոխշահավետ էր, քանի որ արդյունքում լուծվեց եկամուտների անհավասարաչափ բաշխման խնդիրը: Ճապոնիան նման երկրի բացառիկ օրինակ է: Սկսած 17-րդ դարից՝ Ճապոնիան ամբողջությամբ խզեց իր հարաբերությունները աշխարհի մնացած երկրների հետ՝ թույլ տալով տարին մեկ անգամ մեկ Հոլանդական նավի մոտենալ իր սահմաններին: Երբ 1853 թվականին ամերիկյան նավերը ժամանեցին Ճապոնիա, նրանք ստիպեցին Ճապոնիային վերանայել իր դիրքորոշումը: Արդյունքում առևտրային համագործակցություն սկսվեց ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև: Այդ տարվանից սկսած՝ Ճապոնիան բացեց իր սահմանները աշխարհի մնացած երկրների համար: 1868 թվականից Ճապոնիան ամբողջությամբ ինտեգրվեց համաշխարհային տնտեսությանը և սկիզբ դրեց տնտեսության զարգացմանը և միջազգային տնտեսական համագործակցության բարելավմանը: Նույն տպավորիչ արդյունքներին հասավ նաև Արգենտինան: Այդուհանդերձ պետք է փաստել, որ ոչ բոլոր երկրներն են ունենում նման տպավորիչ արդյունքներ: Այսպես, օրինակ, Չինաստանը և Հնդկաստանը գլոբալիզացիայի արդյունքում զգալի կորուստներ ունեցան, որի արդյունքում Չինաստանում միջին եկամուտը կտրուկ նվազեց:

Գլոբալիզացիայի առաջին փուլն ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմի ավարտով: Պատերազմի արդյունքում շատ երկրներ դադարեցին միմյանց հետ առևտրային և տնտեսական համագործակցությունը: 1914-1929 թվականներին միջազգային առևտրի միջին մակարդակը նվազեց՝ 22%-ից հասնելով 16%-ի, իսկ կապիտալի հոսքերը 20%-ից 8%-ի համաշխարհային ՀՆԱ-ի նկատմամբ:

1929թ. ԱՄՆ-ում սկիզբ առած «Մեծ ճգնաժամը», որը շատ արագ տարածվեց աշխարհի մնացած երկրներում, որոշ չափով դադարեցրեց այս գործընթացը: Արդյունքում գործազրկությունը ԱՄՆ-ում կազմեց 25%, իսկ մարդկանց միջին եկամուտները կրճատվեցին 30%-ով:

Գլոբալիզացիայի երկրորդ փուլը սկսվեց 1960թ., որը շարունակվում է մինչ օրս: Նույնիսկ մինչև պատերազմի ավարտը երկրները գիտակցեցին, որ պատերազմը չպետք է անդրադառնա գլոբալիզացիայի վրա: Այդ է պատճառը, որ 1944թ. Բրետտոն Վուդսում տեղի ունեցած հանդիպման արդյունքում սկիզբ դրվեց նոր տնտեսական համակարգի զարգացմանը, որի նպատակն էր միջազգային առևտրի խթանումը: Հանդիպման արդյունքում ստեղծվեցին երկու խոշոր ֆինանսական կառույցներ՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, որի հիմնական առաքելությունը միջազգային ֆինանսական համակարգին հետևելն ու երկրների միջև առևտրային կապերի ձևավորումն ու խթանումն էր:

Երկրորդ կառույցը Զարգացման և վերակառուցման միջազգային բանկի հիմնադրումն էր, որի նպատակը եվրոպական և զարգացող երկրներին երկարաժամկետ վարկերի տրամադրումը, ինչպես նաև այդ երկրներին տնտեսական աջակցության ցուցաբերումն էր:

Ըստ էության այս երկու կառույցների ստեղծման հիմնական պատճառը գլոբալիզացիայի խթանումն էր, և այդ գործընթացում նրանք մեծ հաջողություններ ունեցան: Երբ միջազգային տնտեսությունը 1950-ական թվականներին վերադարձավ բնականոն հունին, գլոբալիզացիան սկսեց զարգացում ապրել: Սկսած 1973 թվականից՝ միջազգային առևտրի տարեկան աճը կազմեց 11%: Նույն թվականից կապիտալի շարժը երկրների միջև ևս աճեց՝ 5%-ից հասնելով 21%-ի:

Վերջին տարիների ընթացքում գլոբալիզացիայի արդյունքներից արդյունավետ օգտվում են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Չինաստանը և Հնդկաստանը, որի արդյունքում գրեթե մեկ միլիարդ մարդ ծայրահեղ չքավորությունից անցում կատարեցին համեմատաբար բարեկեցիկ կյանքի: Պետք է հաշվի առնել նաև, որ վերոնշյալ ցուցանիշը կազմում է ամբողջ աշխարհի

բնակչության 1/6-ը: Ակնհայտ է որ այն վճռորոշ ազդեցություն է ունեցել այդ երկրների սոցիալական ու տնտեսական հարցերի լուծման գործում:

Ներկայումս մարդկանց մի զգալի մասը կարծում է, որ աղքատ երկրները կարող են զարգանալ, հարստանալ, եթե հասարակությունն ապահովված է կրթական և առողջապահական ծառայությունների բարձրորակ համակարգով: Եվ զարմանալի չէ, որ այդ երկրներում նման խնդիրների լուծման համար հսկայական ֆինանսական միջոցներ են օգտագործվում, որոնք ոչ միշտ են դրական արդյունքի հանգեցնում: Մեր կարծիքով կրթությունը, առողջապահությունը երկրի համար ավելի շատ սոցիալական նախապայմաններ են և տնտեսական հաջողության գործում վճռորոշ ազդեցություն ունենալ չեն կարող: Պատճառն այն է, որ ներկայումս նման գործոններ են առևտուրը և միջազգային կապիտալի՝ շուկային ինտեգրումը:

Տնտեսության զարգացման համար կարևոր են տարբեր շուկայական ինստիտուտների ձևավորումը և դրանց հետագա զարգացումը: Այդուհանդերձ նման ինստիտուտների ձևավորումը այդքան էլ դյուրին գործ չէ և պահանջում է քաղաքական կամք առաջին հերթին երկրի քաղաքական ուժերի, իշխանությունների կողմից: Պատճառն այն է, որ նման երկրներում հասարակության «գործարար» հատվածը, որը շատ հաճախ սերտաճած է իշխանական մարմինների հետ, թույլ չի տալիս նման գործընթացի ձեռնարկումը և դրանց իրականացումը՝ մտահոգվելով, որ այդ փոփոխությունների արդյունքում կարող է զրկվել սեփական կապիտալից և գերշահույթներից: Նման ինստիտուտների ձևավորումը հնարավոր է կրճատի նրանց գերշահույթները՝ սկիզբ դնելով շուկայական մրցակցային համակարգի ձևավորմանը ու դրա հետագա կայացմանը:

ՂԱՐԻՔ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Զորանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ֆինանսապես կայուն տեղական ինքնակառավարման համակարգի առկայությունը վկայում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակի մասին: Սակայն ինչպես ցույց են տալիս ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների վերաբերյալ մեր կողմից արված ուսումնասիրությունները և վերլուծությունները, գրեթե բոլոր համայնքներում առկա են տեղական ինքնակառավարման մարմինների (ի դեմս համայնքի ղեկավարի և ավագանու) պարտադիր լիազորությունների ֆինանսավորման մի շարք խնդիրներ, որոնք հիմնականում կապված են հարկային բազաների անճշտությունների, սեփական եկամուտների անբավարարության, դրանց հավաքագրման ցածր մակարդակի և այլ գործոնների հետ: Այս առումով համայնքի առջև ծառացած խնդիրների լուծման և տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) լիազորությունների իրականացման համար կարևորագույն միջոց կարող է հանդիսանալ վարկային և պարտքային միջոցների ներգրավումը համայնքային բյուջեի եկամտային մաս:

Տնտեսագիտական գրականության մեջ հանդիպում ենք տարբեր տեսակետների տեղական ինքնակառավարման մարմիններին ամրագրել պարտք (վարկ, փոխառություն) վերցնելու իրավունք ամրագրելու վերաբերյալ: Պետք է փաստել, որ ՀՀ օրենսդրությամբ որպես համայնքի բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուր ամրագրված են վարկերի և փոխառությունների ձևով ներգրավված միջոցները («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք,